ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3568-Ա « 20 » հուլիսի 2026 թ.

ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ /ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ Հ.2-ՐԴ ՓՈՂՈՑ/
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Գայանե Հովհաննիսյանի դիմումը՝ Սիլիկյան թաղամասում /Սիլիկյան թաղամաս 2-րդ փողոց/ գտնվող հողամասի /տնամերձ/ սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2022 թվականի հունվարի 18-ի Հ-17743 արխիվային տեղեկանքը, Հայկական ԽՍՀ Երևան քաղաքի ժողովրդական դեպուտատների Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1990 թվականի հոկտեմբերի 25-ի հ.30/229 քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2025 թվականի մայիսի 30-ի հ.1622 վկայագիրը, հարևան հողօգտագործողների հայտարարությունները և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ հ.ԱՏ-23122025-01-0636 տեղեկանքը:

Հարցի ուսումնասիրությունից պարզվել է, որ Սիլիկյան թաղամասում /Սիլիկյան թաղամաս հ.2-րդ փողոց/ գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 500.0քմ, որքան ամրագրված է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2022 թվականի հունվարի 18-ի Հ-17743 արխիվային տեղեկանքում և ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2025 թվականի մայիսի 30-ի հ.1622 վկայագրում:

Քննարկվող՝ 500.0քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 9-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2026 թվականի մարտի 04-ի

հ.Ն/12836-26 եզրակացությունը, 2026 թվականի հուլիսի 14-ի հ.Դ-64421-26 գրությունը և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 18-ի հ.28/51806-26 գրությունը.

1.Սահմանել, որ Սիլիկյան թաղամասում /Սիլիկյան թաղամաս 2-րդ փողոց/ գտնվող հողամասի /տնամերձ/ սահմանները որոշվում են 500.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ